

Թափոնների հեռացման վայրերի ուսումնասիրություն

Ի աջակցություն թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ռեեստրների ստեղծման, աղբավայրերի ներկա վիճակի ուսումնասիրման, ինչպես նաև այնտեղ կուտակվող աղբի ծավալների վերաբերյալ տեղեկություն հավաքագրելու նպատակով կատարվել են հետազոտություններ Արագածոտնի մարզի Ապարան, Կարբի և Շենավան համայնքներում, Արմավիրի մարզի Արմավիր և Մեծամոր համայնքներում, Կոտայքի մարզի Գառնի համայնքում, Գեղարքունիքի մարզի Գավառ, Ջրվեժ, Մարտունի, Սևան և Վարդենիս համայնքներում:

Գյումրի քաղաք

Գյումրիի քաղաքային աղբավայրը գտնվում է քաղաքից դեպի հյուսիս-արևմուտք: Աղբավայրի հեռավորությունը քաղաքի ծայրամասից 2 կմ է, իսկ կենտրոնից՝ 7-10կմ: Քաղաքից աղբը տեղափոխում են հիմնականում բաց ապրանքատար մեքենաներով: Աղբավայրը գտնվում է 12 հեկտար հարթակային տարածության վրա, որից հետո տեղանքի ռելիեֆը կտրուկ իջնում է 150-200մ դեպի գյուղատնտեսական նշանակություն ունեցող տարածքներ:

Գյումրիի աղբավայրի հարակից տարածքների հողերի ուսումնասիրության նպատակով վերցվել են փորձանմուշներ աղբավայրի պարագծով (24 հատ) և դեպի քաղաք տանող ճանապարհի եզրերից (2 հատ): Հետազոտված աղբավայրի հողի նմուշներում հայտնաբերված են ՀՔՑՀ իզոմերների կոնցենտրացիաները: Գյումրիի քաղաքային աղբավայրի դիտակետերի 92%-ում ՀՔՑՀ գումարային կոնցենտրացիան գերազանցում է նորմատիվային արժեքները 1.5-21 անգամ: Նորմատիվային արժեքների գերազանցումը նկատվում է 6 կետից վերցրած նմուշներում՝ 2.3-13.5 անգամ: ԴՂՏ-ի իզոմերների և մետաբոլիտների գումարային կոնցենտրացիան հայտնաբերվող Գյումրիի աղբավայրում, տարբերվում է այլ աղբավայրերի նման արդյունքներից, որտեղ երբեմն հայտնաբերվում էին ավելի բարձր կոնցենտրացիաներ գերազանցող նույնիսկ նորմատիվային արժեքներ մինչև 10 անգամ: Գյումրիի քաղաքային աղբավայրի հողերում հայտնաբերված են ալդրինի, դիլդրինի, էնդրինի բարձր կոնցենտրացիաներ, որոնք 37-151 անգամ գերազանցում են հաստատված նորմերը:

Պեստիցիդային բնույթի ԿՕՍ-ների խնդիրները, թեպետ հանդիսանում են արդիական, սակայն վտանգավորության աստիճանով զիջում են պոլիքլորացված բիֆենիլներին (ՊՔԲ):

Ոչդիօքսիանման ՊՔԲ-ների գումարային կոնցենտրացիաները հողի նմուշներում նշանակալից գերակշռում են դիօքսիանման ՊՔԲ-ների գումարային կոնցենտրացիաները: Եթե դիօքսիանման ՊՔԲ-ների գումարային կոնցենտրացիաները հողի նմուշներում շատ դեպքերում չեն գերազանցում

նորմատիվային գումարային արժեքը, ապա ոչ դիօքսիանանման ՊՔԲ-ների գումարային կոնցենտրացիաները հողի նմուշներում բոլոր դեպքերում գերազանցում են նորմերը՝ 4.4-264.4 անգամ: Ոչ դիօքսիանանման ՊՔԲ-ների կոնցենտրացիաները հողի նմուշներում անհամեմատ գերազանցում են դիօքսիանանման ՊՔԲ-ների կոնցենտրացիաները:

Որոշ ոչ դիօքսիանանման ՊՔԲ-ների առկայությունը նմուշներում հանդիպում է շատ բարձր հավանականությամբ՝ 77-100%: Որոշ դիօքսիանանման ՊՔԲ-ները հողի նմուշներում նույնպես հայտնաբերվում են բարձր հավանականությամբ (38.5-81%): ՊՔԲ-ների գումարային նորմատիվը հողում բավականին ցածր է (60մկգ/կգ), իսկ հայտնաբերված գումարային կոնցենտրացիաները աղբավայրերի հողի նմուշներում բավականին բարձր: Ուսումնասիրված աղբավայրի հողի որոշ նմուշներում ՊՔԲ-ների գումարային կոնցենտրացիաները գերազանցում են նորմատիվային արժեքը, այն էլ մինչև 282 անգամ:

ԿՕՍ-ների գումարային կոնցենտրացիաների հայտնաբերումը հիմք են ծառայում անվանելու աղբավայրերը «ԿՕՍ-ների հնարավոր տարածման աղբյուր»:
Անցկացրած հետազոտությունների արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել՝

- Գյումրիի քաղաքի աղբավայրը հանդիսանում է ԿՕՍ-ների կուտակման և տարածման ակտիվ աղբյուր,

- Աղբավայրի հողի նմուշներում դիտվում են նորմատիվներից գերազանցող աղտոտիչների կոնցենտրացիաներ, եթե պեստիցիդային բնույթի նյութերի համար աղտոտվածությունը կազմում է 28.38% ընդհանուր աղտոտվածությունից, ապա ՊՔԲ – ների դեպքում այդ թիվը 71.62% ,

- Պեստիցիդային բնույթի ԿՕՍ-ների պրոբլեմները, թեպետ հանդիսանում են դեռ արդիական, սակայն վտանգավորության աստիճանով և ներկա վիճակից ելնելով զիջում են պոլիքլորացված բիֆենիլներին, որոնք ներշնչում են ավելի մեծ անհանգստություն և մտահոգվածություն, որովհետև նրանց առաջացումը բնության մեջ հայտնի է, նկատվում է նրանց քանակային աճը և տարածվածությունը, դրա հետ միասին, ոչ բոլոր դեպքերում է ենթարկվում հսկողության և կարգավորման:

Ապարան համայնք

Ապարան համայնքի աղբավայրը գտնվում է Ապարանի վարչական տարածքում, կենտրոնից 3-4 կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 5,4 հեկտար տարածք: Ապարան համայնքի բնակչության թիվը կազմում է 30000 մարդ, որոնք առաջացնում են օրական 3-5 տոննա կենցաղային թափոն: Վերոնշյալ աղբավայրում իրենց կենցաղային թափոններն են տեղադրում



նան Սարալանջ, Չքնաղ, Մուլքի, Վարդենիս, Թթու ջուր և Նիգավան համայնքները: Ապարան համայնքի աղբահանությունը իրականացվում է համայնքի կոմունալ ծառայության կողմից, ամենօր, մեկ Մազ աղբատար, մեկ ԿՕ Գազ 33086 Սատկո և երկու վարձու Զիլ ինքնաթափ մակնիշի տեխնիկայի օգնությամբ: Աղբահանության սակագինը մեկ շնչի համար կազմում է 200 դրամ, որը հաջողվում է հավաքել 80%-ով:

Արմավիր համայնք

Աղբավայրը գտնվում է քաղաքից 2-4 կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 8 հա տարածք: Արմավիր քաղաքի բնակչության թիվը կազմում է 25000 մարդ, որոնք ամսեկան գոյացնում են 3500 մ³ կենցաղային թափոն: Համայնքի աղբահանությունը իրականացվում է Արմավիրի բարեկարգում տնտեսության կողմից, ամեն օր հաճախականությամբ իրենց պատկանող երկու Զիլ ՄՄՁ 555, երկու S-40 կցորդիչով, երեք ԿՕ տեխնիկայի օգնությամբ: Աղբահանության սակագինը մեկ շնչի համար կազմում է 100 դրամ, որը հավաքագրվում է մոտ 80%-ով:



Գառնի համայնք

Աղբավայրը գտնվում է Գառնի համայնքի վարչական տարածքում, կենտրոնից մոտ 2 կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 5000մ² տարածք: Բացի Գառնի համայնքից աղբավայրում տեղադրվում է նաև Գեղարդ, Գողթ, Գեղաղիր, Ողջաբերդ, Հացավան համայնքների կողմից առաջացված կենցաղային թափոնները: Գառնի, Գեղարդ, Գեղաղիր, Ողջաբերդ, Հացավան համայնքների աղբահանությունը իրականացվում է «Գառնու աղբահանություն և կանաչապատում» ՀՈԱԿ-ի կողմից, ամեն օր հաճախականությամբ, համայնքին պատկանող մեկ Զիլ ԿՕ և մեկ Գազ 53 ինքնաթափ տեխնիկայի օգնությամբ, իսկ Գողթ համայնքը աղբահանությունը կատարում է ինքնուրույն իրենց համայնքին պատկանող մեկ Զիլ աղբատար տեխնիկայով: Վերոնշյալ բոլոր համայնքների բնակչության թիվը մոտ 15000 մարդ է: Աղբահանության սակագինը մեկ շնչի համար կազմում է 150 դրամ, որը հաջողվում է հավաքագրել 60-70%-ով:



Գավառ համայնք

Գավառ քաղաքի աղբավայրը գտնվում է Նորատուսի վարչական տարածքում և զբաղեցնում է 2.5 հա տարածք: Աղբավայրը գործում է Խորհրդային Միության ժամանակներից, երբ կայացվել է հողհատկացման որոշումը աղբավայրի կարգավիճակի մասին: Աղբավայրը գտնվում է քաղաքից 7.5 կմ հեռավորության վրա: Գավառ քաղաքում բնակվում է 11000 մարդ, որոնք տարեկան առաջացնում են 6250 մ³ կենցաղային թափոն: Գավառ քաղաքի աղբավայրում տեղադրվում է նաև Նորատուս, Սարուղան, Գանձակ, Այրեվանք և Ախկալա համայնքների կողմից գոյացվող կենցաղային թափոնները: Գավառ քաղաքի աղբահանությունը իրականացվում է ամենօր՝ Գավառ քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում ՀՈԱԿ-ի կողմից երեք հատուկ աղբատար և երեք ինքնաթափ Ձիլ մակնիշի տեխնիկայի օգնությամբ: Աղբահանության սակագինը մեկ շնչի համար կազմում է 200 դրամ, որը գանձվում է 70%-ով:



Ջրվեժ համայնք

Աղբավայրը գտնվում է Ջրվեժ համայնքի վարչական տարածքում, կենտրոնից 4-5 կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 3 հեկտար տարածք, որից օգտագործվում է 2 հեկտարը: Աղբավայրի տարածքը, համաձայն պայմանագրի, տրվել է վարձակալության Անկոլո ՄՊԸ-ին: Ջրվեժ համայնքում բնակվում է մոտ 10000 մարդ, որոնք առաջացնում են օրական 23,4մ³ կենցաղային թափոն: Նույն աղբավայրում իրենց կենցաղային թափոններն են տեղադրում Չորաղբյուր համայնքը (3000 մարդ 9.3մ³ օրական) և Ջովք համայնքը (1000 մարդ 5մ³ օրական): Ջրվեժ, Չորաղբյուր և Ջովք համայնքների աղբահանությունը իրականացվում է «Ջրվեժի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի կողմից, Ջրվեժ համայնքում 2 օրը մեկ հաճախականությամբ, իսկ Չորաղբյուր և Ջովք համայնքներում 3 օրը մեկ հաճախականությամբ, մեկ ՄԿՁ հատուկ աղբատար և հինգ ՁԻԼ ինքնաթափ մակնիշի տեխնիկայի օգնությամբ: Աղբահանության սակագինը մեկ



շնչի համար Ջրվեժ համայնքում կազմում է 200 դրամ, իսկ Ձորաղբյուր և Ջուլք համայնքներում 150 դրամ, որոնք հավաքագրվում են Ջրվեժ համայնքում 80%-ով, Ձորաղբյուր համայնքում 50%-ով, Ջուլք համայնքում 95%-ով:

Կարբի համայնք

Աղբավայրը գտնվում է Սասունի կամայնքի վարչական տարածքում, Կարբիից 15կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 8 հեկտար տարածք: Աղբավայրի հողհատկացման որոշումը կայացվել է կառավարության կողմից: Աղբավայրը շահագործվում է մասնավոր ընկերության կողմից, և Կարբի համայնքի կողմից գոյացվող կենցաղային թափոնները տեղադրվում են աղբավայրում պայմանագրային հիմունքներով: Կարբի համայնքի բնակչությունը կազմում է 4700 մարդ, որոնք տարեկան առաջացնում են 8700մ³ կենցաղային թափոն: Վերոնշյալ աղբավայրում տեղադրվում է նաև Աշտարակ համայնքի և գյուղերի կողմից առաջացված կենցաղային թափոնները: Կարբի համայնքի աղբահանությունը իրականացվում է համայնքի «Կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի կողմից, շաբաթական 2-4 անգամ, մեկ ԶԻԼ ինքնաթափ տեխնիկայի օգնությամբ: Աղբահանության սակագինը Կարբի համայնքում մեկ շնչի համար կազմում է 200 դրամ, որը հավաքագրվում է 70-80%-ով:



Մարտունի համայնք

Աղբավայրի ընդանուր մակերեսը 5.5 հեկտար է բաղկացած է երկու իրար հաջորդող հողատարածքներից և երկուսն էլ ունեն իրենց հողհատկացման որոշումները կառավարության կողմից (2006թ մարտի 26-ի 135Ն և 2006թ հունվարի 19-ի 34Ն): Աղբավայրը գտնվում է քաղաքից 1.5կմ հեռավորության վրա: Մարտունի համայնքի բնակչությունը կազմում է 10000 մարդ, որոնք իրենց հերթին առաջացնում են օրական 25մ³ կենցաղային թափոն, սակայն վերոնշյալ աղբավայրում տեղադրվում է նաև Գետաշեն (8000 մարդ), Գեղահովիտ (4300 մարդ), Վաղաշեն (3700 մարդ) համայնքների կենցաղային թափոնները: Աղբավայրում ամեն շաբաթ կատարվում են հողածածկման



աշխատանքներ համայնքի և վարձու թրթուռավոր տեխնիկայի օգնությամբ, հարկ եղած ժամանակ կատարվում են նաև հակահրդեհային կանխարգելիչ աշխատանքներ ՀՈԱԿ-ին պատկանող ջրցան մեքենայի օգնությամբ: Մարտունի համայնքի աղբահանությունը կատարվում է համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում ՀՈԱԿ-ի կողմից իրենց երկու ինքնաթափ Զիլ, մեկ Կամազ ԿՕ և մեկ Զիլ ԿՕ մակնիշի մեքենաներով: ՀՈԱԿ-ի կողմից սպասարկվող համայնքներում աղբահանության սակագինը մի շնչի համար 150 դրամ է, որը հաջողվում է գանձել մոտ 85%-ով:

Մեծամոր համայնք

Աղբավայրը գտնվում է Մեծամորից 5 կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 6 հա տարածք: Մեծամոր համայնքում բնակվում է 12000 մարդ, որոնք առաջացնում են ամսեկան 600մ³ կենցաղային թափոն: Մեծամոր համայնքի աղբահանությունը իրականացվում է «Մեծամորի բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից, 5 օրյա հաճախականությամբ, մեկ Գազ 53 և մեկ Զիլ աղբատար տեխնիկայի օգնությամբ: Համայնքում աղբահանության սակագինը մեկ շնչի համար սահմանված է 200 դրամ, որը հաջողվում է հավաքագրել 60-70%-ով:



Սևան քաղաք

Աղբավայրը գտնվում է Չկալովկա համայնքի վարչական տարածքում և զբաղեցնում է 2.5 հեկտար տարածք, աղբավայրի հողհատկացման որոշումը կայացվել է կառավարության կողմից: Աղբավայրը գտնվում է Սևան քաղաքից 15կմ հեռավորության վրա: Սևան քաղաքում բնակվում է մոտ 25000 մարդ, որոնք օրական գոյացնում են 15տ կենցաղային թափոն: Մեզ հայտնեցին, որ վերոնշյալ աղբավայրում տեղադրվում է նաև Ծաղկունք, Դոմաշեն, Չկալովկա, Լճաշեն, Գեղամավան և Վարսեր համայնքների կողմից առաջացված կենցաղային թափոնները: Սևան քաղաքի աղբահանությունը իրականացվում է «Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից, ամեն օր հաճախականությամբ երեք Գազ 53 և երկու Զիլ մակնիշի տեխնիկայի օգնությամբ: Սևան քաղաքի



աղբահանության սակագինը մեկ շնչի համար կազմում է 200 դրամ, որը հաջողվում է հավաքել 60-70%-ով:

Շենավան համայնք

Համայնքի տարածքում գտնվող աղբավայրը այս պահին չունի հողհատկացման որոշում: Աղբավայրը գտնվում է համայնքից 1-1.5կմ հեռավորության վրա և զբաղեցնում է մոտ 8000մ² տարածք: Շենավան համայնքում բնակվում է 2000 մարդ, որոնց կողմից գոյացված կենցաղային թափոնների ծավալների վերաբերյալ տեղեկություններ չկան: Վերոնշյալ աղբավայրում իրենց կենցաղային թափոններն են տեղադրում նաև Եղիպատրուշ, Քուչակ, Ջրամբար, Ծաղկաշեն, Հարթավան, Արագած, Վարդենուտ, Արայի համայնքները, որոնց բնակչության թիվը կազմում է 12.500 մարդ: Շենավան համայնքի աղբահանությունը իրականացվում է «Արագածի կոմունալ ծառայություն»



ՀՈԱԿ-ի կողմից, շաբաթը 2 անգամ հաճախականությամբ, երկու Զիլ ինքնաթափ, մեկ Գազ 53 և մեկ Սատկո ԿՕ տեխնիկայի օգնությամբ: Աղբահանության սակագինը մեկ շնչի համար կազմում է 100 դրամ, որը հաջողվում է հավաքագրել մոտ 25%-ով:

Վարդենիս համայնք

Վարդենիս քաղաքում բնակվում է 16240 մարդ, որոնք տարեկան առաջացնում են 750-1000 տոննա կենցաղային թափոն: Վարդենիս քաղաքի աղբահանությունը իրականացվում է «Վարդենիս քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում ՀՈԱԿ»-ի կողմից, ամեն օրյա հաճախականությամբ մեկ կցորդիչի, մեկ կամազ մակնիշի և երկու Գազ մակնիշի տեխնիկայի օգնությամբ: Աղբահանության սակագինը մեկ ընտանիքի համար կազմում է 400 դրամ, որը հաջողվում է գանձել 30-40%-ով: Տվյալ աղբավայրում

Վարդենիս քաղաքից բացի իրենց կենցաղային թափոններն են տեղադրում նաև Գեղամասար, Ակունք, Մասրիկ, և Նորակերտ համայնքները: Վարդենիս քաղաքի աղբավայրը գտնվում է կենտրոնից 4 կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 15 հեկտար տարածք: Աղբավայրի հողհատկացման որոշումը կայացվել է 2006 թվականին Կառավարության կողմից:

